ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2025 թվականի № 182-Ա

ՍԵՐՅՈԺԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, *Սերյոժա Մկրտչյանի*՝ 2025 թվականի մայիսի 20-ի № 179 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Սերյոժա Մկրտչյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2025 թվականի հունիսի 2-ից հուլիսի 4-ը ներառյալ:

2. ***Սերյոժա Մկրտչյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Լիանա Գրիգորյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի մայիսի 21
ք. Հրազդան